

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԹՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միացեալ զօրքերը բացում են դռները.—
Ներքին Տեսչութիւն. Մամուլ. Նամակ էջ—
միմյանի գաւառից. Նամակ Շուշու. Նամակ
Ձիւրաշէլի գաւառից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ—
ֆին Տեսչութիւն. Արտաքին լուրեր.—Հեռագր.—
Պրոպագանդ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ—
ՍԻՐԱԿԱՆ. Մեր հոգեւոր ուսումնարանների
կանգնելը:

ՄԻԱՅՆԱԿ ԶՈՐԳԵՐԸ ԲԱՅՈՒՄ ԵՆ ԴՈՆԵՐԸ

Հեռագիրը հաղորդեց, թէ միացեալ
զօրքերը մասն Ձինաստանի մայրաքաղաք
Պեկինը: Ձինաստան կառավարութիւնը գլու-
խը կորցրել է եւ չը գիտէ իր առաջիկայ
միջոցները: Ներքին գանազան մասերում դեռ
լարունակվում են լինական եւ օտար զօր-
քերի պատերազմական ընդհարումները:
Ապստամբական շարժումը, խառնված կա-
ռավարչական փոփոխվող քաղաքականու-
թեան հետ, ստեղծել են մի խառնափնթոր
միջակ Ձինաստանում, որ սակայն ներկա-
յումս պատասխանատու գրութեան մէջ
կանգնած է միացեալ պետութիւնների ա-
ռաջ:

Ինչպէս պէտք է ասէ Ձինաստանը: Նա-
րանիկը արդեօք ապարդիւն մարտումը
օտար զօրքերի դէմ, թէ՛ բանակցութիւն-
ներ սկսել պետութիւնների հետ: Արդեօք
լինական կառավարութիւնը պաշտօնապէս
կուրանայ իր մասնակցութիւնը Մեծ-
Բուռնցի յուզումներին մէջ, թէ՛ կը յայ-
տարարէ նրան իրեն չինական կառավար-
չական հայեացքներին համապատասխան
մի շարժում:

Ձինացիները շատ ծանր գրութեան մէջ
գրին իրանց հայրենիքը: Խեղացնողութիւն
էր պատերազմ յայտնել բոլոր օտարազգի-
ներին: Մի պետութիւն, որ չը կարողա-
ցաւ մի քանի տարի սրանից առաջ դի-
մադրել Նապոլեոնին, այժմ մի անգամից
թշնամական ընդհարումներ է սկսում
առաջնակարգ պետութիւնների միացեալ
զօրքերի հետ: Դա այնպիսի մի անմիտ եւ
փտանգաւոր քայլ էր, որ ամբողջ աշխարհի
զարմանք էր շարժում եւ բացատրվում էր

միայն մի բանով, որ Ձինաստանում ծագել
է ապստամբութիւն, որի դէմ կառավա-
րութիւնը անգոր է մարտել աջողու-
թեամբ, որովհետեւ ապստամբական շարժ-
ման համակրողներ կան նոյն իսկ կայսե-
րական ընտանիքի մէջ:

Ձինաստանը այժմ պէտք է պատրաստվի
լեւելու միացեալ ազգերի դատավճիռը:
Նրանից կը պահանջեն նոր արտօնու-
թիւններ օտարազգիների համար, նրա
վրա կը դնեն մեծ տուգանքներ: Ձի-
նաստանը պէտք է բանայ իր նաւահանգիստ-
ները եւ ներքին փաճառանցները արտա-
քին առևտրի համար, դառնալով բաց
դռներ: Ձինաստանը արդէն այժմ ունի
1 1/2 միլիարդ ֆրանկ պարտք, որ մեծ
ծանրութիւն է պատճառում այդ պետու-
թեան. եթէ միացեալ պետութիւնները մի
քանի հարիւր միլիոն ֆրանկ էլ աւելաց-
նեն տուգանքի ձեւով, այն ժամանակ երկ-
նային կայսրութիւնը կընկնի երկու միլիարդ
պարտքի ձեւով ծանրութեան տակ:

Անհաւատարի է թւում, որ ներկայումս
խօսք բացվի Ձինաստանի բաժանման մա-
սին: Ներքինական քաղաքական մամուլի
մեծագոյն մասը այն կարծիքին է, որ Ձի-
նաստանը, իրեն բաղադրական մարմին,
պէտք է մնայ անձեռնմխելի: Նոյն կար-
ծիքն է լսվում եւ Ռուսաստանի մամուլի
մէջ, թէ՛ կան եւ առաջարկողներ, որ Ձի-
նաստանը բաժանվի, ինչպէս, օրինակ, նպա-
տակարար է համարում «Нервля» շա-
բաթաթերթը, աւարկելով, որ աւելի
ձեռնադր է Ռուսաստանի համար կառա-
վարել իր զօրքերով Ձինաստանի մի մասը,
քան թէ ունենալ դրացի մի անկախ պե-
տութիւն, որ կարող է կարծ միջոցում
զինվել եւ միանալով Մազլիայի կամ Նապո-
լեոնի հետ՝ յարձակում գործել Ռուսաս-
տանի վրա:

Ներկայ չինական գործերի մէջ մի բան
աչքի է ընկնում: Այն ժամանակ, երբ Ձի-
նաստանը ընդհարում ունեցաւ Նապոլեոնի
հետ, նա շատ խղճալի տպաւորութիւն էր
թողնում բոլորի վրա եւ համարվում էր
անվտանգ մի քաղաքական մարմին, որ
ինքնաբերաբար չի ձեռնարկի պատերազ-

մական նոր գործողութիւններ: Իսկ այժմ,
չը նայելով որ Ձինաստանը ներկայումս
է իբրեւ ներքին խռովութիւններին եւ-
թակայ մի երկիր, որ տարուբերվում է
ալիքների մէջ, նա գործում է վտանգա-
ւոր մի տարրի տպաւորութիւն, որ կա-
րող է անհասկնելի դժուարութիւններ յա-
րուցանել բոլոր պետութիւնների կամ նը-
րանցից մի քանիսի համար եւ բարդ ընդ-
հարումների առիթ դառնալ: Իսկ այդ
հանգամանքը ունի իր նշանակութիւնը
պետութիւնների համար, որոնցից մի քա-
նիսը կը ցանկանային ոչ միայն օգտվել
Ձինաստանից, իբրեւ փաճառանցից, այլ եւ
իբրեւ զինակից մի ոյժից՝ իրանց քաղաքա-
կան նպատակների համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Կ. Պօլսի լրագրիւններից առ այժմ միայն
«Արեւիկէ» մէջ կը գտնուի Գրիգոր Զան-
չեանի մահվան արձագանքը: Բաժնորդի պիտու
տիրող միջոցառող աչքի առաջ ունենալով, ան-
շուշտ բաւականաչափ պիտի համարենք եւ այն,
ինչ կողմնակցում է ասկի լրագրիւր այդ առիթով:

Երէկ իրիկուն, Ս. Պատրիարքին ուղղուած
հեռագիրը մը գուժեց ուսանայ ծանօթ բա-
րեարդ պ. Գրիգոր Զանչեանի մահը, որ
նախընթաց օր տեղի ունեցել է Բեղերս-
պուրի մէջ: Այս մահը հաւասար սուգ մը
պիտի պատճառէ որչափ որ ու ուսանայ
չընականներու, այնչափ ալ մեր, օրէնքներին
հայրուստ մէջ, քանի որ անով կանխա-
նայ մէկը այն բարեբարի տիպարներէն, ո-
րոնք կուտան առանց տուած ըլլալին չորս
հոգեւոր հոգեւոր: Զանչեանը այս տիպար-
ներուն ամէնէն աչքառուներէն մէկն էր,
ու տարիներով իր անունը չէր բաժանուած
նմանօրինակ բարեգործական գործերէ, ո-
րոնցմէ շատեր ալ առանց իր անունին կը
յայտնուէին: Եւ այս մարդը հարուստ չէր.
ընդհակառակը դրամական անձուկ լինած
ուներ, որ ուրիշ մէկու մը քով պիտի ապա-
նէր բարեգործութեան ու եւ փափագ, ու
եւ ձգտում, ստիպելով զինքը, որ ուրիշնե-
րուն վրա մտածելէ աւելի իր պէտքերը հո-
գայ: Բայց Զանչեանը այդ մտածումը չունե-
ցաւ երբեք. որովհետեւ բարեգործու-
թեան եռանդը շատ վառ էր իր մէջ, եւ

միւս կողմէ ալ մեծ հարստութիւն մը
չունէր անոնց յատկացնելու համար, մը-
տաճեց միջոցներ գտնել եւ յաջողեցաւ
ճարհեր կըլլայ, որ Զանչեանը անունը
չարունակ բարեգործութիւններով կը յիշա-
տակուի: Քիչ մը ամեն տեղ: Մեզի համար
մանաւանդ, այդ բարեգործութիւնները ստա-
ցած էին շատ սրտի մօտիկ հանգամանք մը,
քանի որ անոնք անոք մանուկներու պատը-
պարման շուրջը կը դառնային: Իր Պատ-
րիարքարանը դրկած նպաստներով 12 որդա-
նոց կը պահուի այսօր գաւառներու մէջ եւ
փերջերս նոր մըն ալ բանալու պատրաստու-
թիւններ կային: Ինչպէս ըսինք, այդ որդա-
նոցներու ծախքը ինք իր քսակէն չէր հո-
գար, քանի որ կարողութիւն չունէր արդէն,
բայց գրական հաւաքածոն, զոր հրատարակեց,
այն աստիճան մեծ ընդունելութիւն մը գը-
տաւ, որ կարելի եղաւ պահպանել 12 որդա-
նոցներուն ալ գոյութիւնը: Պ. Գրիգոր Զան-
չեանը հազիւ քառասուն տարեկան կար եւ
շատ հեռու էր ուսումնէն լեզուէն: Երկար
ատեն խմբագիր եղած է ուսանելի թերթի
մը, եւ որոշ հետք մը թողած է ուսու հրա-
պարակագրութեան մէջ: Կը յիշուի անշուշտ
թէ վերջերս իր յօդներն ատենցին Բեղերս-
պուրի մէջ, ուր ամէնէն յարգուած դէմք
մըն էր եւ յարաբերութեան մէջ կը գտնու-
էր բարձր չընականներու հետ: Ս. Պատրի-
արքը Նպաստից Յանձնաժողովին յառաջի-
կայ նիստին պիտի առաջարկէ Պ. Զանչեան-
ի յիշատակին պատշաճ յարգանքը ընծայե-
լու համար՝ որոշում մը ընել, ինչ որ պարտք
մըն է արդէն:

Այս բոլորը շատ լաւ: Բայց լրագրիւր մի
քիչ աւելի ճիշդ տեղեակ պիտի լինէր թու-
քանայերի եռանդոտ բարեբարի կեանքի հան-
գամանքներին: Զանչեանը երբեք չէ եղել
խմբագիր ուսանելի լրագրի, այն էլ «Արեւիկ-
ա» տեան, այս դեռ ներքին սխալ է, բայց լրա-
գրիւր գոնէ պիտի իմանար, որ Զանչեանի բը-
նակութեան տեղը Մօսկվան է եղել եւ ոչ թէ
«Բեղերսպուրի»:

ՆԱՄԱԿ ԷԶՄԻԱՆԻ ԳԱՆԱՌՈՒՄ

Սամաղար գիւղ, օգոստոսի 2-ին
Ես գրել էի ձեզ մեր գիւղերում երեւան եւ-
կած բորենու մասին: Այդ գաղանքը մինչեւ այ-
ժմ էլ չարունակում է սարսափ տարածել մե-
զանում: Պատմեմ նրա վերջին գործերը:

Յուլիսի 27-ի գիշերը՝ երիտասարդ Սարգիս
Համբարձումեան, 22 ամեայ հասակում, զոհ

առջ էին աւարտել ձեռնարանը, խաբվում են եւ
հետեւում «Երանց հայր տեսչի» օրինակին:

Անաջող եւ սխալ պէտք է համարել եւ այն
նորաբոյս ուղղութիւնը, որ այն կարծիքն է
յայտնում, իբր թէ հոգեւոր ուսումնարանի տե-
սուչը պիտի հոգեւորական (վարդապետ) լինի:
«ԶԷ» որ միւս դասնութիւնների հոգեւոր ու-
սումնարաններում էլ այդպէս է: Միւս դա-
սնութիւններում շատ բան կայ, որ մեզա-
նում չը կայ. մեզանում էլ, մեր եկեղեցում
շատ բան կայ, որ օտար եկեղեցիներում չը
կայ.—դրանից ինչ: Հարցն այն է, որ մեր ե-
կեղեցուն օրէնքներին հակառակ չէ, որ հոգեւոր
ուսումնարանի տեսուչը, ինչպէս եւ կրօնի
դասատուն, աշխարհական լինի. հետեւապէս
խորութիւն դնելով ոչ միայն անտեղի է, այլ եւ
ուղղակի անկանոն եւ ապօրինի: Այդ նորա-
բոյս հոսանքը մեր ժողովրդական եկեղեցուն
կղերական ոգի է ուղղում պատուաւաստել եւ մեր
եկեղեցին մի քանդված եւ խախտու կղերա-
նոց դարձնել: Հոգեւոր ուսումնարանի տես-
չութիւնը քահանայադոմբութիւն չէ. հետեւա-
պէս կարող է յանձնվել եւ մի սոսկ աշխար-
հական: Մօտակայ տեսչական ընտրութիւն-
ների ժամանակ, ի հարկէ, ի նկատի կառնեն
տեսչացուի արժանիքները եւ ոչ թէ հոգեւո-
րական կամ աշխարհական լինելը:

Գրեթէ վերջոյնցալ կերպի մի տեսուչ ունի
եւ էջմիածնի ձեռնարանը Մայր աթոռի բարձ-
րագոյն իրավանքի վարել պահանջում է, որ
նրա կառավարիչը եւ ներկայացուցիչը լինի
մի հեղինակաւոր եւ վաստակաւոր անձնա-
ւորութիւն, եւ ոչ թէ մի վարդապետ, որի
ամբողջ վաստակը այն է եղել, որ մի քա-
նի տարի նոյն ձեռնարանում տեսչի օգնականի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ՀՈԳԵՐՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԿԵԱՆ- ՔԻՑ

Վերջերս մեր հոգեւոր ուսումնարանները
զբաղեցին հասարակութեան եւ մամուլի ա-
ռանձին ուշադրութիւնը: Կաթողիկոսական հրա-
մանով նշանակված հոգաբարձական ընտրու-
թիւնները արդէն վերջացել են եւ ապարդիւ
է կելի տեսուչ ընտրելու եւ ուսուցչական խումբ
կազմելու հարցը: Մի հարց, որի աջող կամ ա-
նաջող լուծվելուց հիմնովին կախված է ու-
սումնարանի ամբողջ ներքին, հետեւապէս, էա-
կան միջակը: Իւրաքանչիւր ուսումնարանի
հոգին վարչութիւնը եւ ուսուցիչներն են. լա-
ւեն սրանք, բարեխիղճ, իրանց կոչմանը համա-
պատասխան—լաւ, կենդանի եւ արդիւնաւոր
կը գործէ եւ ուսումնարանը. հակառակ դէպ-
քում ուսումնարանն էլ մեռած, փչացած գրու-
թեան մէջ կը լինի: Արդ՝ ինչ է հարկաւոր,
ինչ պայմաններ պիտի ստեղծվեն, որպէս զի
մեր հոգեւոր ուսումնարանները կարողանան
իրանց զերը կատարել մեր հասարակական
կենսութեան Յանձն չառնելով մի լրագրական
օրդուածով լրակատար պատասխան տալ այս
կարեւոր հարցերին եւ թողնելով այդ ձեռնհաս
մարդկանց—մենք մեզ թող կը տանք հասա-
րակութեան առաջ դնել այս խնդիրներին վե-
րաբերելով մեր մի քանի խորհրդածութիւնները
եւ այն զիտողութիւնները ու տեղեկութիւն-
ները էջմիածնի ձեռնարանի եւ Երեւանի թեմա-
կան դպրոցի մասին, որ հաւաքել ենք ար-

ժամահաւատ աղբիւրներից:

Վերջին տարիները հոգեւոր «Երազոր» տե-
սուչների չընան էր: Երիտասարդ, անփորձ
վարդապետներին լրագոր իշխանութիւն էին
չնորհում, երեւի այն համոզմամբ, թէ որպէս
զի փոքրիկ մարդը մեծ բան կարողանայ կա-
տարել՝ նրան հարկաւոր է անագին իրաւունք-
ներով զինել: Բայց... կարճահասակ մարդու
գլխին ինչքան ուղղւում էք իրաւունքներ թա-
փեք—նա բարձրահասակ չի դառնայ: Կարծես
անսահման լրագորութիւններից եւ ոչ թէ բա-
րեքիւրի եւ աղբիւր եռանդից է կախված լինում
արդիւնաւոր գործունէութիւնը: Ընդարձակ ի-
րաւունքներով, փոքրիկ ընդունակութիւններով,
սահմանափակ չնորհքով եւ մեծ ինքնավստա-
հովութեամբ գործ առաջ տանել անկարելի է:
Այժմ երկու «Երազոր» տեսուչներն էլ հրաժար-
ված են: Մի անձնաւորութեան լրագոր իրա-
ւունքներ չնորհելու փորձը կատարելով անաջո-
ղութեամբ պատկզեց եւ պարզեց, որ փրկու-
թիւնը լրագորութիւնների մէջ չէ:

Սակայն ինչ էր լրագոր հայրերի հրաժ ֆիա-
կոյի պատճառը: Նախ՝ մի ընդհանուր պատ-
ճառ, այն է՝ մի մարդ, որ ոչ մի տարի ու-
սուցիչ եղած չէ, լաւ տեսուչ լինել չէ կարող:
Իսկ մի այսպիսի անփորձիւ լրագորութիւն
տալ—նշանակում է դպրոցի յօնքը չինելու տե-
ղը, աչքն էլ հանել: Բայց ասա եւ ուրիշ պատ-
ճառներ, որ աւելի արձակված լրագորների
կենսագրականին են վերաբերում: Դրանք եր-
կուսն էլ ոչ մի կանոնաւոր դպրոցում եղած
չեն եւ բոլորովին անմասն իր զպրոցական
բարեկարգութեանը: Երկուսն էլ էջմիածնի ձե-
ռնարանից են: Այս ուսումնարանը այժմ էլ
բաւական անբարեկարգ է, իսկ ինչ էր եւ ինչ

Препод. ведется по собств. сочинениямъ.

գնաց բորենուն։ Նա պառկած է եղել կայում, գիւղի ծայրին, ունենալով իր մօտ եւս մի քանի ընկերներ։ Գազանը գիւղից ուշ ժամանալին յարձակւում է նրա վրա, խածում է կոկորդիլի գոռոշութեամբ եւ 20 քալլ հեռու տանելով խեղդամահ է անում, այնպէս որ մօտին պառկած ընկերներին ոչ մէկը չէ իմանում այդ։ Մինչ բորենին իր որսով զբաղւած է լինում, պատահում է մի մարդ, որը ձիու վրա ցորեն բարձած՝ գնում է ջրաղաց։ Հասնելով այդ տեղին, ձին կանգ է առնում եւ որքան էլ տէրը ձիուն խփում է՝ սա չէ գնում առաջ։ Տէրն ուղղորդվեալով դիտելով տեսնում է, որ իրանից ոչ հեռու դազանը կանգնած է, ունենալով առիթը մի մարդու դիակ։ Նա հաւաքաբէ կանչում Սարգսի ընկերները զարթնելով վրա են հասնում, բայց բորենին արդէն փախած է լինում։ Եւ անձամբ տեսայ դիակը։ Խեղճի վրէժը կտրւածի նման բացվել էր, փորը պատուով էր, աղիքները դուրս էին թափվել, իսկ մարմինը չաղախված էր ցեխի մէջ։ Բորենին ուղեցել էր դիակը մօտակայ այգին հասցնել, որ ապահով կարողանայ վայելել, բայց դրա համար հարկաւոր էր որ առուից անցնէ։ Նա գցել էր դիակը առուի ցեխերի մէջ։ Եւ չէր կարողացել դուրս բերել, մինչեւ որ յիշեալ մարդը վրա էր հասել։

Նախ քան Սարգսի մարմինը հողին յանձնելը՝ էջմիածնից եկաւ պրիստաւը՝ եղեւթեանը վերահասու լինելու եւ խոստացաւ, որ իշխանութեան թոյլտուութեամբ ինքնըզ զօրք հանելու, որպէս զի հետամուտ լինեն ու սպանեն այդ գազանին։ Իր խոստման համաձայն, կիրակի օրը, պրիստաւը շատ ձիաւոր կողակներով եկաւ եւ 24 ժամի չափ շարունակ այս ու այն կողմ շրջելով՝ անկարող եղաւ գազանին գտնել։

Մի եւ նոյն գիւղերը բորենին գնացել էր մօտակայ Մ. գիւղը եւ կտուրի վրայից փախցրել էր 8 տարեկան մի աղջիկ։ Աղջկան դցել էր կտուրից պարտէզը, որ այնտեղից տանի, բայց վրա հասնողներն էին եղել եւ աղաւթի աղջկան։ Ասում են, որ աղջիկը մեծածնան է։ Հետեւեալ գիւղերը բորենին Մօլլա-Դիւրսի գիւղի մի տանից մի երեխայ է տարել ու կրեւել։ Կրկին նոյն տունը վերադառնալով ուղում է, որ մի երկրորդը տանի, բայց տանեցիները վրա են հասնում եւ հազիւ կարողանում են երեխային աղաւթի։

Անցեալ գիւղեր մեր գիւղում դարձեալ երեւալին մէկի տեղ երկու բորենի, առաջինը կարծրագոյն է, իսկ այս երկրորդը՝ սպիտակա՝ նման։ Նրանք, զրոյնները կախած, հոտոտելով, մանրաբայլ ման են գալիս թէ փողոցներում եւ թէ կտուրների վրա։ Շարունակ հրացանաձգութիւն տեղի ունեցաւ, այնպէս որ հազիւ կարելի եղաւ գիւղերն առանց վտանգի լուսացնել։ Գողերն օգտւում են բորենու հասարակութեան վրա թողած երկիւղից, որովհետեւ

պաշտօնն է վարել։ Այլ բան է, եթէ մի այդպիսի անձնաւորութիւն չը լինէր... Ասում են, իբր թէ վարդապետ էին ուղում տեսուչ նշանակել, որպէս զի ծախք քիչ լինի... գեղեցիկ պատմութիւն... Մեր միակ բարձրագոյն ուսումնարանին է ժամագրի տեսուչ են ընտրում։ Նոյն «անտեսութիւնը» գործադրւում է եւ ուսուցիչների վերաբերմամբ։ Էծանագին վարժապետներ են հաւաքում եւ զարմանում, որ զարոյցի գործը կաղում է։

Էջմիածնում շատերը այն կարծիքին են, թէ ուսուցչութիւնը մի պաշտօն է, որ իբրեւ ուղղորդութիւն է չնորմավորում այս կամ այն անձնաւորութեան, կարծում են, թէ եթէ մի մարդ զալիս եւ խնդրում է, որ իրան մեր ուսումնարաններում ուսուցիչ ընդունեն, ուրեմն նա ոչ մի այլ գործ կամ պաշտօն չէ կարողացել գտնել եւ ճարահատեալ եկել, դիմում է մեր դպրոցների վարչութեանը։ Սա ճշմարտութիւն է, թէպէտ, ի հարկէ, մասամբ միայն։ Երբեք կան, շատ կան այդպիսի ուսուցիչներ, եւ սրանք իբրեւ ուսուցիչներ անպէտք են եւ լաւ կը լինէր, եթէ գրանցից բոլորիցն էլ ազատվէին մեր ուսումնարանները, բաւական է ինչ որ վրաս են պատճառել դրանք։ Սակայն, այն էլ պէտք է տեսի, որ անկասկած ուսուցիչներին թոււում կան եւ այնպիսիները, որոնց ուսուցչի դաստաւը չառժամով եղել է անկեղծ ցանկութիւն՝ ծառայել մեր ուսումնարաններին առանց որ եւ է ետական եւ շահագիտական միտումով։ Ուսուցիչների այս երկու տեսակը երբեք չը պէտք է չիտթել միմեանց հետ։ Դժբաղդաբար մեզանում սրանց մէջ տարբերութիւն չեն գնում եւ չեն աշխատում վերջիններին գրաւել եւ պահել ուսումնարանում։ Յիշեալ «անտեսական» քաղաքականութիւնը ներգործեց եւ աշակերտների վրա։ Վեհափառ

10—15 ընտանիք միանում են ու քնում մէկտեղ, այդպիսով շատ աներ մնում են դատարկ։ Կիրակի գիւղեր Հաջի-Ղարա գիւղում գողերը մտել էին մի տուն ու եղած-չեղածը տարել։ Սակայն պահապաններն այդ նկատելով՝ հրացան արձակեցին եւ գողերն, իրանց կողպուտն այգիներին մօտ թողնելով, փախան։

Մ. Փիւրան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յուլիսի 26-ին

Արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին, որ քաղաքային վարչութիւնը իրաւունք է ստացել փակված Հայոց Բարեգործական Ընկերութեան դրաքարան-ընթերցարանը բաց անելու։ Բայց մինչեւ այսօր դեռ չեն բացվել այդ հիմնարկութեան դռները։ Ասում են, թէ քաղաքապետը ձրի գրադարանապահ է ուղում գտնել, որ յետոյ բաց անէ։ Զարմանալի եւ անտեղի խնայողութիւն։ պատահում է, որ քաղաքը մի ճակիւնովի համար 1000-ներ է պատրաստ ծախսելու, իսկ ամալկան 30 բուլբուլ չեն ուղում տալ եւ մի կարգին դրաքարանապետ վարձել։

Դուռնայի վրա ժողովուրդը շատ մեծ յոյսեր ունէր, բայց այսօր նա բոլորովին հիասթափվել է, տեսնելով որ դուռնան հասարակ ժողովուրդի համար աւելի ծանր բեռ է դարձել։ Փոխանակ աղքատ մարդկանց հարկերը թիթեւա՝ նախ, աւելի եւս առատ տուրքեր եւ հատ հարկեր են պահանջում։ չը նայած այդ բոլորին, քաղաքային ոչ մի չօչափելի արդիւնք չէ տեսնում։

Քաղաքի փողոցները աւելի եւս կեղտոտ են, քան առաջ էին։ ոչ միայն քաղաքի խուլ ու յետ ընկած փողոցներն են անմաքուր, այլ նոյն իսկ կենտրոնում կան այնպիսի փողոցներ, ուր առանց քիչիւր բռնելու, անկարելի է անցնել։ Համոզվելու համար բաւական է հրապարակի մօտ ելած մի քանի նեղ փողոցներով անցնել կամ թէ թատրոնի փողոցով գնալ դէպի թուրքաց բազարը։ Մարդ օր ցերեկով առանց մի վտանգի չէ կարող այդ փողոցով անցնել, ուր միայն գիւղերը Սակայն դուռնան շարունակում է իր անուշ քնի մէջ նիւնել։

Չէ, եթէ մեր քաղաքի գործերն այսպէս շարունակվեն, Շուշին թշուառ չէ կարող լինել։ Հազար փառք են տալիս այն գործիչներին, որոնք ագիւր գործի համար տանվել են, բայց խաւարաւոր մարդիկ հալածել նրանց։ Շնորհիւ այդ գործիչներին՝ մենք ունեցել ենք գրադարան-ընթերցարան, որի դռները այժմ փակ են մնացած։ Երախտագիտութեամբ յիշում են այն բարեգործներին, որոնք տուել են մեղ ջուր, հիւանդանոց։ Բայց այսօր քաղաքացիները չեն կարողանում օգտվել ինչպէս որ հարկաւոր է։ Հիւանդանոցի դռները գրադարանի

կաթոլիկոսից ճեմարանին հրաման էր եկել պալատեցիներ աշակերտների թիւը եւ հասցնել 170-ի։ հետեւապէս, հարկաւոր էր արձակել ճեմարանից մօտ 50 հոգի այնպիսի աշակերտներին, որոնք թրանշանները թէ վարձեց եւ թէ աւարակներից թոյլ չէին։ Հրամանը կատարեցին... աշակերտներին առան, դպրոցից փողոց դուրս գցեցին... եւ Վաղարշապատի փողոցում տեսնում էին, ինչպէս արձակված երեխաները լալով գիւղ էին վերադառնում։ Իսկ առաջիկայ ուսումնական տարին նորեկների ընդունելութիւն չէ լինելու, այսպէս է յայտարարված գոնէ Արարատի ամառադրում։

Յաւալի բան։ Սրանից մօտ հարիւր տարի առաջ Ներսէս մեծ կաթողիկոսը, դեռ կաթողիկոս չեղած ժամանակ, ուղում էր էջմիածնում մի «համալսարան» բանալ 200 ուսանող ներքի համար։ Իսկ այսօր ուղում են պալատեցիներ աշակերտների եւ ուսանողների թիւը, որ դեռ 200-ի էլ չէ հասնում։ Միթէ մի ամբողջ դարի դառն պատմութիւնը տակաւին չէ սթափեցրել մեզ։ Միայն մեծութիւնը եւ վանքի միջոցների սղութիւնն են պատճառ բերում։ Տէր Աստուած, եթէ ուղում են ծախք պալատեցիներ, թող քչաչնեն այժման միաբաններին թիւը, սրանք գոնէ արդէն լիովին ապագուցել են, որ իրանցից ոչ մի օգուտ չը կայ մեր եկեղեցուն, իսկ ճեմարանի օգուտ էտ լինելը միթէ այսօր էլ, XX դարում, մեզ հայեցիւ, Ասիայի «եւրօպայիներէն» համար դեռ մի ակիւրտալ չէ դառնել։ Փող չը կայ—թող վանքի միաբանները գնան, աշխատեն, գործ չինեն եւ իրանց աշխատանքով ճեմարան պահեն։ այս է պահանջում իրանց կոչումը։ Բայց ուր է, ում են վարդապետ դառել։ Մեղանում, մեր հոգեւորականութեան մէջ դեռ չէ մօտ գործել եւ

պէս փակ են, ջուրը քաղաքի բոլոր մասերում կարգին չէ բաժանված։

Բ.

ՆԱՄԱԿ ՁԻՅՐԱՅԷԼԻ ԳԱՒԱՌԻՑ

Առաջիկ գիւղ, յուլիսի 29-ին

«Տարէնը մի գառիկ, այն էլ նաւակաթիկ»։ Մեր գիւղը՝ գոյութիւն ստանալու օրից, միայն մի քանանայ է ունեցել, այն էլ կատարեալ պատուհաս։ Այդ քանանան, Մակար Գրիգորեանց, մի երիտասարդ է, որ սովորել է դանա՝ զան տեղերում ու անցեալ անգամ էջմիածնում մեր գիւղի վրա ծխական քանանայ է ձեռնադրվել։ Իր պաշտօնավարութեան նոյն իսկ առաջի օրերից, նա թէ խօսքով եւ թէ գործով ժողովրդի զգուշաբար յարուցեց դէպի ինքը։ Մի կողմ թողնելով չը հասնելի պատկերներ, որոնք սովորական բան են մեր կողմում, նա Զիւլան գիւղում մի ութ տարեկան աղջիկ պատկեց նոյն գիւղացի մի 15—16 տարեկան տղայի հետ։ Այդ տարօրինակ ամուսնական կեանքը երկար չը տևեց։ մի քանի օրից յետոյ նորահարսը փախաւ հօրանց տուն ու սկսեց իր տիկնախաղը, իսկ տղային եւս պատահեցի մի ծանօթ բժիշկի մօտ։ Եթիլիսը սկսել էր աւելաւորներ գործել նրա մարմնի մէջ։ Եւ հասկացաւ, թէ ինչն էր ստիպել նրա ծնողներին այդպէս վաղ ամուսնացնել իրանց որդուն։ Մեր կողմերում կարծում են, թէ վնասական արտադր հիւանդացածը իսկոյն կը բժշկվի, եթէ ամուսնական կապ հաստատէ մի կոյս աղջկայ հետ։ Մակար քանանան, որ մտաւոր կրթութիւնով բարձր է շատ գիւղական քանանաներից, արգելք չեղաւ այդպիսի ապօրինի, խիղճ տանջող գործի դէմ։

Հարամիքների սեղօնը անցաւ Մակար քանանան թողեց մեր գիւղը ու սկսեց ուրիշ գիւղերում առեւտուրով պարտաւոր Ամբողջ աշխարհում գիւղում զանգակի ձայն չէր լսվում։ «Աստուած ողորմի մեր քանանայի հօրը», մի օր նկատեց մի տարիքաւոր գիւղացի, նա զանգակը հանգիստ է թողել, ու գիտէ, որ երբեք մի ուրիշը այնքան կը կոծէր, որ կը կտրէր ու գիւղը աւելորդ ծախսի կենթարկէր։ Գիւղում կարմուռի երկխոսի կոտորեց—ծխական Մակար քանանան չը կար։ Տաւառները եկեղեցու բակում, ժողովրդի առաջ, հայեցանք խափեց քանանայի հասցէին եւ առաջարկեց անպապող հեռացնել նրան ու ուրիշ քանանայ հրաւիրել։ Բայց քանանայ լաւ դիրք ունեցող եղբայրը խնկրեց այդ շանկը։ «Մի ծառ տնկել էք, էլ ինչու էք պոկում, մի կտոր հաց էք դրել ձեռքին էլ ինչու էք ուղում խըլը»։ Այդ խօսքերը կաշկանդեցին ժողովրդին, բայց քանանան դարձեալ չը կայ եւ մեր մեռնիները ուրիշներն են թաղում։ Այժմ, ինչպէս երեւում է, Մակար քանանան առեւտուրը քանանայութիւնից աւելի արդիւնաբեր գտնելով,

արժատալել այն ամենատարրական սկզբունքը, որ իւրաքանչիւր աշխատանք պիտի վարձատրվի եւ որ միւս կողմից՝ ոչ մի օգուտ չը բերող իրաւունք չունի ոչ մի կօպէկ ստանալու։ Մի եպիսկոպոս զարմանում է անդամական էր, որ ճեմարանի ուսուցիչ-վարդապետները աւելի են ստանում քան թէ ինքը, «որ այս քան տարի եպիսկոպոս է»։ Սրբազանը չէր հասկանում, որ նրանք աշխատել, պարտաւորվել, ուսում են ստացել եւ այժմ էլ գործ են կատարում, եւ այդ գործին համեմատ դեռ անշան են ջնջին վարձատրութիւնն են ստանում։ Իսկ ինքը սրբազանը միայն այն է, որ սրբազան է... ուրիշ ոչինչ... բայց վարձատրութիւն գործին են տալիս եւ ոչ տիւղաւորին։

Նոյն նախանձոտ աչքով են նայում միաբանները եւ աշխատական ուսուցիչները ոտնիկ վրա—Ո՛հ, վանքը ոչ թէ պիտի փողոցացնէ ճեմարանի ծախքը, այլ աւելացնէ, որովհետեւ ճեմարանի տարեկան քաջ—40,000 բուլբուլ—մի ամօթաբեր գումար է իր փողոցութեամբ։ 40,000-ով մի միջնակարգ եւ մի բարձրագոյն ուսումնարան կառավարել, իսկ եթէ վանքի միջոցները քիչ են, հարկաւոր է խելացի կերպով շահագործել վանքապատկան կալքերը, պալատեցիներ անպէտք եւ անխորհուրդ ծախսերը, անսահման գողութիւնների առաջն առնել—եւ այն ժամանակ վանքը կարողութիւն չի ունենալ։

Առհասարակ թէ էջմիածինը եւ թէ թեմական դպրոցների հոգաբարձութիւնները պիտի վերջապէս գնան այն համոզմունքին, թէ էժմանային տեսուչներով եւ փողոցից հաւաքած ուսուցիչներով դպրոց կառավարել, աշակերտներ կրթել անկարելի է։ Չէ որ այսպիսիները երբեք բարեխիղճ ուսուցիչներ լինել չեն կարող, սրանց համար ուսումնարանը միայն ու-

խնդիր է տուել պաշտօնավոր լինելու համար, պատճառ բերելով մի երեւակալական հիւանդութիւն։ Բարի ճանապարհ տէր հօրը...

Լեւոն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք հաղորդել էինք, որ պրօֆէսոր Դօկուշանով եկել է մեր երկիրը լրացնելու իր հետազոտութիւնները, որոնք վերաբերում են կովկասեան հողերի կազմութեան։ Դօկուշանով մեր տաղիր է հետազոտութիւններ անել Լոռու գաւառամասում, Գորիսի նահանգում եւ Սեւ ծովի ափում։ Սկսածները ամսին նա կը կարգալ թիֆլիսում չորս դասախօսութիւն, որոնց նիւթը կը լինեն ընդհանուր հայեարքներ հողի կազմութեան մասին աշխարհիս զանազան մասերում եւ Կովկասի հետազոտութեան արդիւնքները։ Այն հողի նմուշները, որ անցեալ տարիները Դօկուշանով վերցրել էր մեր երկրից եւ տարել իր հետ մայրաքաղաք, մեծ մասամբ քիմիական բաղադրութեան եւ ֆիզիկական կազմութեան կողմից ուսումնասիրված են։ Ներկայ լրացուցիչ հետազոտութիւնները վերջացնելուց յետոյ, Դօկուշանով կը հրատարակէ Կովկասի հողային կազմութեան մանրամասն նկարագիրը։

Թագաւոր Կայսրը բարեհաճել է հրամայել, որ Անդրկովկասեան երկրում մտնելի բունդը ոչնչացնելու նպատակով՝ ձրիապէս բաց թողնել անտառներին եւ թուփերից այնքան ցախ, որ քան հարկաւոր կը գայ այդ գործի համար։

Մի քանի անձանց չըղանում միտք է յղացել կազմել ձկնարտութեան մի ընկերութիւն։ Անդրկովկասում, որ պէտք է արհեստական կերպով բազմացնել զանազան տեսակի ձկներ մեր լճերում եւ գետերում։ Այդ ձեռնարկութիւնը խոստանում է լինել պարտնաւոր եւ նրան մասնակցելու յանկութիւն են յայտնել Ռուսաստանի մի քանի դրամատէրեր։

Ռուսաստանի երկաթուղիների բոլոր կայարաններում այժմ անընդհան հաղորդակցութեան ստանակներ են ծախում մինչեւ։ Վաղեկավազեան երկաթուղու Պետրօվսկ-Բալաշարի բաժանմունքի բոլոր կայարանները, եւ Բալաշարի վրայով մինչեւ Անդրկովկասեան երկաթուղու կայարանները։

Երկաթուղու գծերում աղէտների թիւը պալատեցիներ նպատակով, միւստրութիւնը որոշել է ազատ կացուցանել պարտաւորեալ պաշտօնավարութիւնից այն մեքենավարներին, որոնք յոգնած են կամ տկար։ Եթէ մեքենավարը գնացքի դուրս գալուց երկու ժամ առաջ յայտնէ, որ յոգնած է, պէտք է նրա խնդ-

ծիկ ստանալու աղբիւր է։ Ի՞նչն է պատճառը, օրինակի համար, որ մեքենան մինչեւ օրս ոչ մի դասալիք չը կայ, եւ աշակերտները ստիպված են կրկնակի աշխատանք թափել ձեռնալիք տետրակներով կամ օտարազգի ձեռնարկներով դաս սովորելու։ Չէ որ միայն փողոցից վերցրած ուսուցիչը կարող է կեղտոտ ինտրիզներով զբաղվել եւ նոյն իսկ աշակերտներին գրող գրեւ այս կամ այն «անդուր» եւ «անյարմար» ուսուցչի կամ տեսչի դէմ։ Միայն էժմանային տեսուչը, որ իր կեանքում ոչ մի կանոնաւոր դպրոց տեսած չէ, կարող է աշակերտներից կարծիք հաւաքել ուսուցիչների մասին։ այսպիսի սանձարձակութեան, անիշխանութեան են դատապարտվում մեր հոգեւոր կրթարանները, ուր յայտնի չէ լինում, թէ ո՞վ է տեսուչը, ո՞վ է ուսուցիչը եւ ո՞վ աշակերտը։ Աշալկերտները պիտի դիտենան, որ իրանց իրաւունք չէ տուած եւ չէ էլ կարող երբեք տրվել ուսումնարանի գործերին եւ կառավարութեանը խառնվել, աշակերտների պարտքը եւ իրաւունքն է սովորել, ուրիշ ոչինչ։ Եւ երբ մի տեսուչ կանչում է, աշակերտներից կարծիք հարցնում, ի հարկէ, նրա նպատակը դպրոցի օգուտը եւ աշակերտների շահը չէ, այլ իրան աշակերտների աչքում իբր «պրիւր» դարձնել, իսկ «կարծիք յայտնող» երեխաները լոկ անբան միջոց են դառնում «պրիւր» տեսչի խաղաղա ձեռքում։ Ի հարկէ, եթէ մի ուսուցիչ հեղինակութիւն չէ վայելում եւ տարիներ շարունակ ասելով թիւն է յարուցանում աշակերտների մէջ, այսպիսի ուսուցչին պէտք է հեռացնել, բայց տեսուչը կողմնակի ճանապարհով պիտի տեղեկ լինի այդ հանգամանքին եւ ոչ թէ կանչէ աշակերտներին եւ պաշտօնապէս առաջարկէ նրանց կարծիք յայտնել։ Ազատամտութիւն չէ այդ, այլ մտքը սանձարձակութիւն։

(Կը շարունակվի)

դադարեցնել «Урал» քաղաքի հրատարակությունը:

ՊԱՐԻՉ. Անհնարաբար պարզեցնելը տուած են՝ 87-րդ կարգից—Նորել եղբայրներին, 88-րդ կարգից—Նեբելյին և Հովարդին. 90-րդ կարգից—Ռեմիսի առևտրական գործարանին. 101-րդից—կայսերական տեխնիկական ընկերության մշտական խանութներին, կայսրուհի Մարիայի հաստատություններին և Կատարյան եռյակներին: Ուղղորդված զանազան զանգվածային ընկերություններին, հակամարտության խանութներին, պրինց Պետր Ալեքսանդրովի Օրդենուրական, 112-ից—Կարմիր-Պաշտի առև ընկերության, Մարիա Կայսրուհու հաստատություններին, Պետերբուրգի կոյրերի հոգաբարձության, աշխատանքի տների Պետերբուրգի հոգաբարձության. 121-րդից—գլխավորական միսատուրության, գլխավոր բժշկական վարչության, Կարմիր-Պաշտի ընկերության և բժշկի Բեմ-մերսին:

7 օգոստոսի

ԲՈՒՍՈՎ ԴՈՆԻ ՎՐԱ. Օգոստոսի 5-ի հրդեհը օջախացրեց երկու գործարան, սպիտակ նաթի երեք պահեստ, հայր երկու ամբար, երկաթուղու կամուրջը և 10-ի չափ զանազան շինություններ: Գետի վրա այդպիսին երեք բեռնակիր նաւեր՝ լի սպիտակ նաթով, երկու դատարկ նաւ և Դոնի գետաբերանի կամուրջի շուրջը: Վնասները միլիոններ են հասնում. պատճառը անդրոյ վարվելն է կրակի հետ բեռնանաւից սպիտակ նաթը դեպի պահեստը մղելու:

ՎԻԼՆԵՆՍԻԱՅԻ. Կասեյի պալատում ընդունելով ֆելդմարշալ Վալդեբրեյտին՝ կայսրը ճառ արտասանեց, որի մէջ առաջ հետեւեալը. «Ձեր նշանակումը գլխավորապէս կախված էր համայն Ռուսաստանի կայսրի համաձայնությունից, մի հզօր թագաւորի, որ զգացնէ է ապրի իր ոյժը մինչև հետագայ տարիների ներքո. այս հանգամանքը նորից ապացուցանում է, թէ ինչպէս սերտ կապված են կայսրություններին: Ղինորական տրագիկաները, մեր ժողովրդի շահի համար՝ ես ցանկանում եմ, որ մեր միացեալ արշաւանքը դառնայ փոխադարձ յարգանքի և փոխադարձ խաղաղության գրաւական եւրոպական պետությունների համար, ինչպէս փորձեց նոր բանին հասնել անցեալ տարի ուսաց կայսրը ուրիշ ասպարեղումս:

ԼՈՐԷՆՑՈ-ՄԱՐԿԵԶԻ. Հաղորդում են, թէ Դեվլան դերի է վերցրել 4,000 անգլիացի և 7 թնդանօթ: Բօքսիտը դատարկեց Միդլսբորոն:

ՊԵՏՏՐՈՎԱ. Երէկ Դեվլան լոյս ընկաւ Կոմսիոնարի հիւսիսային կողմում, ուր բանակ էր դրել Բադեն-Պոտել և պահանջեց, որ վերջինս անձնատուր լինի: Բադեն Պոտել հարցրեց, թէ ինչ պայմաններ է առաջարկում Դեվլան:

ԼՈՆԴՈՆ. Մովպետությունը հրատարակել է հետեւեալ բովանդակութեամբ մի հեռագիր ծովապետ Բրիտայի, թաղարկած օգոստոսի 6-ից, Չիֆուից. «Ճապոնական աղբիւրից իմացալ, որ Պեկինի մի մասը վառվում է: Փողոցներում շարունակվում է կոբու: Ինչու թող չը տուեց կայսրուհուն հեռանալ Պեկինից: Դաշնակից զորքերը չըլայապառնէն և և հրակոծում են քաղաքի ներքին մասը, ուր չինացիները վերջին դիմադրություն են ցոյց տալիս:

ՍԵՐԱՊԵՆՆԻԱՅԻ ՔԱՆԱԿԱՐԱՐ
Հրատարակչին՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ Մօսկվայում
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵՆՏԻ

◆ **ՀԻՆ ՅԱԻ** ◆
(Հրապարակաբանական խոհեր)

ԳԻՆԵՆ 30 Լ.

Վաճառվում է Թիֆլիսի կենտրոնական գրա-վաճառանոցում, «Մշակի» խմբագրատանը և Հրատարակչական ընկերության գրասենեակում, Գ. Գալստեանի մօտ: (Ե. չ.) 2—10

ՀԱՅ ՌԻՍՈՒՑԻՉ

Ուղում է պաշտօն. աւանդում է հայոց լեզու և հայկական ծայնագրութիւն: Դիմել ԱԿԵՐՄԱՆԻ. Կուչեռնո Արտյոն Օրդյանց. 3—3

ԱՐԴԱՆՈՒՉԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ
Հարկաւոր են
ՌԻՍՈՒՑԻՉ և ՌԻՍՈՒՑՈՒՀԻ

(Գերադասելի են ամուսինները): Պայմանների համար դիմել՝ Միխայլովսկայա, № 177, Կարապետ Ռատականին: 9—10

Ընկերություն
ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.
Ծ Ա. Ղ. Կ Ա. Յ Ի Ն
զանազան հոտեր ունեցող
Օ-ԳԵ-ԿՈՒՆԻ
G n r h a s e r a d
«ՕՐԽԻԴ ՅԵԱ»
«ԼԵԻԿՈՅ»
«ԽԵՉՈՐԵՆԻ ԾԱՂԻԿ»
«ՄԻՄՈՋԱ»
Սրուակը 1 ր.
1/2 » — 60 Կ.
1/2 ֆ. 1 ր. 75 Կ.
104,035 (ամս. 5) 1—10

ՄԻ պատուաւոր հայ ընտանիք հասցեալ-ւորներ (НАХЛѢДНИКИ) է ընդունում:
Հարցնել Ալեքսանդր Շաղինաւի խանութում, քաղաքային վարչութեան շինութեան մէջ:
(Ե.) 1—5

НОВОЕ
ФРАНЦУЗСКОЕ
ПЕЧЕНИЕ
С. С. ЦУК
PETIT BEURRE
МОСКВА
С. С. ЦУК

Լոյս տեսաւ
„ԼՈՒՍԻՆԵՆՔ“
գրեց
ՄԵԼԻՔ Ս. ԴԱՆԻՔ-ԲԵԿ
160 էջ, տպարան Վիեննայի Միխայլովսկայ, 1900 թ.
ԳԻՆԵՆ Է 2 ՐԱՆԱ

Կը ծախվի հետեւեալ պայմաններով՝ չորս հարկւր օրինակ Արաբիկի որբանոցին համար, երեք հարկւր օրինակ Կիւրոսի որբանոցին համար, իսկ մնացած 300 օրինակը հեղինակին համար:

Հեղինակը այդ 300 օրինակները կը պահէ իր ծախսերն հանելու և բարեկամներու նուիրելու համար. իսկ միւս օրինակները բոլորովին անձնականին են, հեղինակը նուիրած է հայ ինչեալ երկու որբանոցներուն: 2—2

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՏՈՆ
Յ. ՂԱՐԱԳԵՕՋԵԱՆԻ

(գր. VIII-րդ տարին, Николаевская ул. д. № 33).

Աշակերտներն ընդունվում են 7—15 տարեկան հասակի՝ իբրեւ գիշերօթիկ ու երթուհեկներ նախապատրաստութեան և բոլոր պետական դպրոցները մանկու համար, այն է՝ գիմնազիաներ, թէպէտական, վաճառականական և ուրիշ պետական դպրոցներ: Դպրոցում աւանդւում են հայոց լեզու, կրօն և այլ առարկաներ: Գիշերօթիկ աշակերտները այս տարի աւելի լաւ պայմաններ մէջ զրկած կը լինեն՝ թէ ուսման և թէ դաստիարակութեան տեսակետից. պիտի աւանդվին նոր լեզուներ, աւելի գործնական կերպարանք տալով առարկաներին: Վաճար չափաւոր է՝ ըստ համաձայնութեան: Երկու եթեւեկ և մի գիշերօթիկ կընդունվին ձրի որբ, չքաւոր երեխաներից: Դպրոցի կառավարի բարեմիտ ընկերների վերակայութեամբ: 8. Դարազեօգեան (չ.) 2—3

ՍԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՏՈՆ
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
Բ Ա Գ Ի Ռ Ի Մ

Ընդունվում են երեխաներ և պատրաստվում օրիորդաց և տղայոց դիմագրայի, թէպէտական դպրոցի և այլ ուսումնարանների համար:
Մանկական պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տարեկ.) ֆրէբելան սիստեմով: Ընդունվում են գիշերօթիկ և կիսագիշերօթիկ երեխաներ: Մանկական պարտէզի և ուսումնարանի մանրամասն ծրագիրը կարելի է ստանալ օգոստոսի 20-ից, Բագուում: 3—8

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ:
Եւ հակառակ՝ Բաթումից Մարսել, մանկու Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 2/18 օգոստոսի ԱՆԱՏՈՒ չորեքշաբթի, նաւապետ ԲԻՆԵԿԻ: Եւ այսպէս՝ շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից թետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան առմաստներ տրվում են ուղորականից պակաս գնով:
Ամբար մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտաքիայի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերության գործակալներին:
ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր Գ. Արսոյն, Եւրէթէմայա: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջաբարոյի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—կղը. Վ. և Ի. Մուրաֆեաներին, Եւրէթէմայա փողոց, տուն Կրասինիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՍՍՈՒՅԻ—Վաղիկաւոր երկաթուղու առևտրական գործակալութիւն (Ե. չ.) 17—20

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում
Ծախվում են հետեւեալ նոր գրքերը՝
Այվազեան Բ.—Աշոտ երկաթ, պատմական վէպ, Բ. տպագ. Թիֆլ. 1900 թ. 1 ր.:
Բուրդուզեան Ա. Բ.—Մեր ներքինը, Թիֆլ. 1900 թ. 10 Կ.:
Շանթ, Եւրպ. օրեր, վէպ, Թիֆլ. 1899 թ. 40 Կ.:
» » վէպ, Թիֆլ. 1899 թ. 60 Կ.:
» » Դարձ, վէպ, Թիֆլ. 1899 թ. 40 Կ.:
» » Դերասանուհին, վէպ, Թիֆլ. 1900 թ. 40 Կ.:
Տէր-Արիստակէսեան Ե.—Գաղթականի մը համառոտ կարծիքները, Մոսկվա, 1900 թ. 50 Կ.:
Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (Ե.) 2—3

Лучшая аттестация отъ учебного начальства.
И. Я. БРОНЬ-ФОНЬ-БРЕННЕРЪ.
преподасть
Полный курс БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1) Бухгалтерія (двойная итальянская), 2) Коммерческая арифметика, 3) Коммерческая экономія, 4) Арифметика на счетахъ, 5) Торговые и вексельныя узаконенія и 6) Коммерческая корреспонденція.
Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Бонусъ 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.
Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.
Начало занятій съ каждаго перваго числа мѣсяца. 11—20
Годъ занятій одиннадцатый.

Ֆիմանսների միևիտրի քոլլուտրեանր
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку, Прачешная, домъ Теръ Ованесова)
Կուրսերի նպատակն է ապ ունեցիներին մասնագիտական-առևտրական կրթություն և պատրաստել հմուտ հաշվապահներ: Աւարտողներն ստանում են ատեստատ և ունենում 1) Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուղթանություններ և թուղթանություններ համարի վրա. 2) Հաշվապահություն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցություն. 4) Առևտրական անտեսագիտություն. 5) Առևտրական և մուրհակային օրենքներ. 6) Գնադրություն և արագադրություն (ուղղումն ձեռագրի):
Ընդունությունը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և եղը. Ծովանեան և ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում: Կուրսերի կանոնադրությունը (УСТАВЪ) և մանրամասն ծրագիրը՝ արվում են ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. չ.) 13—25

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Լեւոնտովսկայա փողոց, № 9)
Ցանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտներին, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուկ լեւանյին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթություն, Կովկասի ուսումնարանական չըլանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ:
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-իՑ
Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղը. Ծովանեան և ընկ. ԲԱԳՈՒԻ գրասենեակում և կուրսերի հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (Ե.) 5—12

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՎԱՄԵԱՆ
Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահական ռուսական ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԻՄ ԵՒ ՊԱՏՐՈՍԵԱՆԻՄ Է»
Երկու սերունդ անձանց՝ 4 ամսվա ընթացքում հաշուապահություն գործնականապէս, և քաղաքական, և եղած դէպքերում լսանք և առում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՈՒՆԵՐԻ ԱՌԱՎԱՄԵԱՆ ԵՆ
Ա) Կրկնակի խալական հաշուապահություն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդիմանալի արդիւնաբերական և կերտինի գործարանական հաշուապահություն:
Բ) Առևտրական թուղթանություն:
Գ) Առևտրական նամակագրություն:
Դ) Գնադրություն և ամենապատ ձեռքերի ուղղելը:
Պարապմունքներ սկսվելու են 1900 թ. սեպտեմբերի 15-ից, ճաշից թետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր 20-րդ ամսից թետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյան, ՍՕԼՈԼԱԿ, Սերգեյեւսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:
Վերադիմել հաշուապահության ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍԻՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յարանի գրավաճառանոցներում: ԳԻՆԵՆ Է 3 ր. 50 օպէկ: Օտարաքաղաքացիները դիմել են համար կարող են դիմել հեղինակին, առանց պատի ծախս վճարելու: 15—30